№ 79 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 11 **1896** ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 11 № 79

ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

10 V 70

ՇԱԲՈՒՆԱԿՎՈՒՄ Է

„ՄՇԱԿ"

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը՝ թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ռ., ինն և ութ ամսվանը՝ 8 ռ., եօթ ամսվանը՝ 7 ռ., վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը՝ 2 ռ., ամսական 1 ռուբլի։

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ։

Օտարաքաղաքացիները պէտք է դիմեն հետեւեալ հասցէով՝ Тифлисъ. Редакція «МШАКЪ»։ Իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction «MSCHAK»։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տոկուն գործունէութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մինիստրի առաջարկութիւնը. Դատաստանական դահլիճից. Նամակ Բագուից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Լէդմօնդ Գոնկուր. Նամակ Թիւրքիայից. Նամակ Բուլգարիայից. Նամակ Պարսկաստանից. Նամակ Ամերիկայից. Արտաքին լուրեր.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՏՈԿՈՒՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Ոչ մի խոշոր հասարակական գործ չէ կարող պատուաստվել և մարմնանալ կեանքի մէջ, եթէ նա չունենայ իր իրագործողները, իր եռանդուն և նոյն իսկ ֆանատիկոս ներկայացուցիչները, որոնք տարիների ընթացքում անսպառ աշխոյժով և ոգեւորութեամբ առաջ տանէին նրան, յաղթելով խոչընդոտներ և արգելքներ։

Մեր հասարակական աշխարհը, մեր երկրի կրթական և արդիւնագործական կեանքը վաղուց հանդէս են բերել մի շարք հիմնական խնդիրներ, որոնք պէտք է գործնականապէս լուծվեն և ազգեն իրականութեան վրա։ Սակայն տարիները անցնում են և մեր ինտելիգենցիայի մասնակցութիւնը ժողովրդական կարեւոր առօրեայ գործերի մէջ մնում է աննշան և երբեմն բոլորովին բացակայ։ Մեր ինտելիգենցիայի մեծ մասը ժողովրդից է դուրս եկել, անծանօթ չէ ժողովրդի կեանքի արտայայտութիւններին, և սակայն խորթացել է ժողովրդից և բարոյական կապը կարել նրանից։

Եթէ Ռուսաստանի ներքին նահանգներում ճորտութիւնը, եթէ ուրիշ տեղերում տոհմական և ազգայնական տարբերութիւնները կարող էին բաժանել միմեանցից ժողովուրդը և նրա ղեկավար մասերը, այդ գոնէ չը պէտք է տեղի ունենար մի բուռն ժողովրդի մէջ, ուր ոչնչացել են դարերի ընթացքում դասակարգային տարբերութիւնները, ուր ամենքը համարվում են միմեանց նման, միմեանց հաւասար, մէկը միւսից առաջացած։

Այդ տխուր բաժանման պատճառը ոչ թէ այն է, որ մեր ինտելիգենցիան հակաժողովրդային է և չէ ցանկանում գործել ընդհանրութեան շահերի համար։ Ոչ։ Ընդհակառակն, մեր ինտելիգենցիան միշտ խօսում է ժողովրդի և նրա շահերի անունից և միշտ կամենում է նրա համար գործել։

Սակայն ոչ մի բանով ինտելիգենցիան չէ արտայայտում իր ձգտումները, չէ իրագործում իր ասածները, գործնականապէս չէ կապվում ժողովրդի հետ։ Բոլորը մնում է օդի մէջ, չը ստանալով իրական նշանակութիւն։

Մինչդեռ այնպիսի հիմնական լուրջ խնդիր, ինչպէս հասարակական բաղդրեալ գործունէութիւնն է, պահանջում է երկարատեւ, տոկուն աշխատանք տարիների ընթացքում, անընկճելի կերպով շարունակվող եռանդ։

Միայն ցանկանալ, միայն խօսել, միայն ոգեւորվել ուրիշ ազգերի մէջ տեղի ունեցող գործերով,—բաւական չէ։ Ժամանակ է, որ մարդիկ սովորէին անպատասխանատու կերպով չը խօսել շարունակ, և փորձէին խօսքը վերածել գործի։ Միայն այն ժամանակ ինտելիգենցիան սերտ կապերով կը կապի իրան ժողովրդի հետ և կը դառնայ նրա իսկական մտերիմ բարեկամը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻՆԻՍՏՐԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆԸ

—

Ֆինանսների մինիստրը դիմել է կովկասեան կառավարչապետին՝ խնդրելով մանրամասն տեղեկութիւններ Անդրկովկասի բրինձի արդիւնագործութեան մասին։ Կառավարչապետը իր կողմից ուղարկել է նահանգապետներին մինիստրի տուած հարցի կէտերը, առաջարկելով, որ չատ չուտով տեղեկութիւններ ժողովեն նրանց վերաբերութեամբ և պատասխանեն մինչև յուլիսի 1-ը։

Մինիստրութեան մէջ բրինձի մասին հարց է ծագել այն պատճառով, որ Օդեսա քաղաքի բրինձ մաքրող գործարանների տէրերը խնդրամատոյց են եղել կառավարութեան՝ պակասեցնելու ներմուծվող չալթուկի մաքսը, յայտնելով, որ Կովկասում բրինձի մշակութիւնը տարածված չէ և չատ սահմանափակ զարգացում ունի։ Պետական խորհուրդը որոշել է մաքսի պակասեցնելու խնդիրը քննութեան առնել։ Ուրեմն մինիստրի տուած հարցերը գործնական նպատակի են ծառայելու անմիջապէս, և ուրեմն Անդրկովկասից գնացած պատասխաններից կախված է բրինձի արդիւնագործութեան վերաբերեալ օրէնսդրական այս կամ այն կարգադրութիւնը։

Բրինձի մշակութիւնը Անդրկովկասի յայտնի տեղերում չատ տարածված է և տալիս է նրան մշակող գիւղական ժողովրդին ակներև չատ։ Անդրկովկասի տափարակների այն մասերում, ուր ջուրը առատ է, բրինձի մշակութիւնը համարվում է ամենաձեռնտու ցանքսերից մէկը։ Լենքօրանի, Ղուբայի, Շամախու, Գեօքչայի, Արէշի, Նուխու, Զաքաթալի, Գանձակի, Ջիվանշիրի, Ջեբրայիլի, Զանգեզուրի, Բօրչալուի, Երեւանի, Էջմիածնի, Սուրմալուի, Շարուրի և այլ գաւառների տափարակի գիւղերը արդիւնաբերում են չատ թէ քիչ քանակութեամբ բրինձ, որ սպառվում է նոյն տեղերում, կամ արտահանվում է քաղաքները։ Բրինձի ցանքսերը մի քանի տեղերում նոյն իսկ անհրաժեշտութիւն են դարձել։ Այդ այն տեղերն են, ուր հողը ճահճային է և ուրիշ բոյս անկարող է աջող աճել և զարգանալ և այն տեղերը, ուր հողը չատ է աղի և ուրիշ բոյսեր չեն կարողանում զարգանալ։ Երբ աղի, «չօրաքեաթ» տեղերում ցանում են բրինձ և այդ պատճառով ջուր են կապում ածուների վրա, աւելորդ և վնասակար աղերը հողի մակերեւոյթից հալվում են ջրի մէջ և ջրով հեռացվում հողից։ Այդպիսով՝ բրինձի ցանքսից յետոյ հողի յատկութիւնը լաւանում է և ուրիշ բոյսերի մշակութիւնը կարելի է դառնում։ Երբ մի քանի ժամանակ անցնելուց յետոյ հողը դարձեալ հարստանում է վնասակար աղերով, նորից վարում են բրինձ և նորից բարւոքում հողը։

Բրինձը ունի միայն մի անյարմարութիւն, մի վնասակար կողմ. այդ այն է, որ նրա ցանքսերը ներկայացնելով իրանցից մի-մի ճահիճներ, տարածում են այնպիսի հիւանդութիւններ, ինչպէս են ջերմ և ատամոքսի տկարութիւններ։ Սակայն այդ հանգամանքը չէ կարող արգելաւոր լինել բրինձի մշակութեան, որովհետև կարելի է այնպէս կարգադրել և կանոնաւորել այդ օգտաւէտ հացաբոյսի մշակութիւնը, որ նա չը վնասի առողջութեան։

Հարաւային Եւրոպայի երկիրներում նոյնպէս տարածված է յայտնի տեղերում բրինձի մշակութիւնը։ Այնտեղ վաղուց ուշադրութեան են առել բրինձի ածուների անմպաստ ազդեցութիւնը և հրատարակել են կանոններ, որոնք պարտաւորեցուցիչ են բրինձագործների համար։ Նոյնը կարելի է անել Անդրկովկասում, և այդպիսով թէ չահաւէտ մի արդիւնագործութիւն զարգացնել, և թէ նրա վնասակար կողմերը ոչնչացնել։ Ցոյս կայ, որ մինիստրութեան ժողոված տեղեկութիւնները համոզեն, որ բրինձի մշակութիւնը չէ կորցրել Անդրկովկասում իր նշանակութիւնը և կարօտ է զարգացման և բարւոքման։

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

(Շարունակութիւն)

Պաշտպան Զեմեսով. Այժմ առաջ կը բերեմ մի քանի հասարակական երեւոյթներ, որոնք ապացուցանում են, որ պ. Սպանդարեան արտաքսված է եղել հայ գրողների շարքից թէ այդ գրողների և թէ հայ հասարակութեան կողմից։

1887 թ-ին հայ հասարակութիւնը ուզում էր հայկական թատրոնի հիմնադիրներից մէկի՝ պ. Գ. Զմշկեանի գործունէութեան երեսնամեայ յօբելեանը։ Հայոց մամուլի բոլոր ներկայացուցիչները միացած՝ ղրկեցին պ. Սպանդարեանին այդ ուռնախմբութեանը մասնակցելու իրաւունքից, իրանց համար անպատուաբեր համարելով պ. Սպանդարեանի հետ միասին հանդէս գալ որ և է հասարակական գործում։

1887 թ-ին փող էին ժողովում յօդուտ Զէյթունի հրկիզեալների. այդ նպատակով ստորագրութիւն բանալը թոյլ էր տրված միայն «Մշակ» և «Արձագանք» լրագիրներին, մինչդեռ այն ժամանակ բացի այդ լրագիրներից Թիֆլիսում հրատարակվում էր և «Նոր-Դար» լրագիրը։ Պարզ է, թէ ինչու թոյլ չէր տրված «Նոր-Դարին» փող ժողովել։ Խնդրում եմ այս փաստը լաւ յիշէք, որովհետև դա նշանակութիւն ունի և մեղադրանքի գլխաւոր կէտի համար։

Նախագահ. Ո՞վ էր թոյլ չը տուողը. կառավարութիւնը։

Զեմեսով. Ոչ, հասարակութիւնը՝ յանձին այդ նպատակով ընտրված մասնաժողովի։

Անցնում եմ պ. Սպանդարեանի յօբելեանին, որ նրա հաւատարմատարը բերում է իբրև ապացոյց այն բանի, թէ պ. Սպանդարեանը մեծ յարգանք է վայելում հայ հասարակութեան մէջ։ Ինչ էր ներկայացնում իրանից այդ յօբելեանը իբրև հասարակական երեւոյթ. ինչ հասարակական բան կար նրա մէջ.—ոչինչ։ Այդ յօբելեանի առթիւ կազմված ճաշին չէր մասնակցում հայ մամուլի ոչ մի ներկայացուցիչ, ոչ մի գրող, ոչ մի հասարակական կազմակերպութեան պատգամաւորութիւն. հայ դերասանները անգամ աւելորդ էին համարել գնալ այդ ճաշին. նոյն իսկ պ. Աբ. Յովհաննիսեանը, որ այդ ժամանակ հաշտվել էր պ. Սպանդարեանի հետ և որ իր լրագրում մի լուր էր տալել այդ յօբելեանի մասին (միակ լուրը հայ և տեղական ռուս մամուլի մէջ),—նա էլ անհնար էր համարել անձամբ մասնակցել այդ ճաշին։ Այդ ինչ յօբելեան է. համեմատեցէք այդ ճաշը այն ճաշի հետ, որ տրվեց Գր. Արծրունու յօբելեանի օրը և կը տեսնէք թէ ինչ տարբերութիւն կայ մասնաւոր բարեկամների սարքած ճաշի և հասարակական բնաւորութիւն կրող ճաշկերոյթի մէջ։ Ես պէտք է այստեղ յիշեմ, ի միջի այլոց, և այն, որ այդ յօբելեանի օրը մի մասնաւոր անձի կողմից տարեկան 300 ռ. նպաստ նշանակվեց «Նոր-Դար» թերթին։ Այդ ինչ միջոց է լրագիրն ապահովացնելու համար և ինչ է ցոյց տալիս, եթէ ոչ այն, որ լրագիրն այնքան բաժանորդ չունէր, որ կարողանար իր գոյութիւնը շարունակել առանց նպաստների, ուրիշ խօսքով այն, որ լրագիրը, ինչպէս ես սկզբում ասեցի, չէ կարգացվում։

Այժմ ես մի քանի խօսք կասեմ այն երեւոյթների մասին, որոնք պէտք է լաւ հող պատրաստէին պ. Մալումեանի համար՝ ընդունելու ամբողջ հայ հասարակութեան մէջ տարածված այն համոզմունքը, թէ պ. Սպանդարեան ընդունակ էր իրագործել հասարակական փողերը, և այնուհետև կանգնեմ մեղադրանքի գլխաւոր կէտին։—«Նոր-Դար» լրագիրը ժողովում է 268 ռուբլի հանդուցեալ Ներսէս պատրիարքի արձանի համար։ Անցնում է երկար ժամանակ և ոչ նուիրատուների ցանկն է տպվում «Նոր-Դարում», ոչ էլ այն, թէ ուղարկվել են արդեօք այդ փողերը ուր հարկն է, թէ ոչ։ Վերջապէս 1887 թ-ին, նուիրատուներից, թէ լրագիրներից մէկը, լաւ չեմ յիշում, զարմացած այդ լռութեան վրա, հարց է տալիս «Նոր-Դարին», թէ ինչ եղան այդ փողերը։ Եւ ահա ինչ է պատասխանում պ. Սպանդարեանը.—«Հայ եկեղեցու կանոններին դէմ է հոգեւորականներին արձան կանգնեցնելը. խմբագրութիւնս չը գիտէր, որ այդ փողերը նըշանակված են արձանի համար և «Նոր-Դարը» հակառակ էր Ներսէս Վարժապետեանի թեկնածութեանը»։—Ոչ մի խօսք, թէ ինչ տեղ են կամ ինչի վրա են գործ դրվել փողերը։ Ինձ այստեղ չէ հետաքրքրում այդ փողերի վիճակը *), ինձ հետաքրքրում է միայն այն հարցը, թէ ինչպէս է վերաբերվում մի լրագրի խմբագիր իր պարտականութեանը, հասարակական փողերին և հրապարակական հաշուետուութեանը։ Նոյնպիսի հարցերի տեղիք են տուել և այն փողերը, որ պ. Սպանդարեան ժողովել է Խ. Աբովեանի արձանի համար։ Թէհրանում հրատարակվող «Շաւիղ» թերթը, որի 1896 թ. № 5 ես այս բոպէիս ներկայացրի ձեզ, ուղղակի մեղադրում է պ. Սպանդարեանին այդ փողերը, ինչպէս և զէյթունցիների օգտին ժողոված փողերը վատնելու մէջ։ Պ. Սպանդարեան ինքն իր կողմից փոխանակ աշխատելու նպատակայարմար միջոցներով վարատել այդպիսի կասկածներ, այնպէս էր վարվում և այնպիսի լեզու էր գործածում իր թերթում, որ կարծէք աշխատում էր աւելի ևս հաստատել այդ կասկածները։ Նրա գրածը Ներսէս պատրիարքի արձանի համար ժողոված փողերի մասին ես արդէն յիշեցի. այժմ անհետաքրքիր չի լինի ձեզ համար իմանալ, որ պ. Սպանդարեան աւելի ևս անկեղծ կերպով է յայտնել իր կարծիքը հասարակական փողերի մասին։ Իր լրագրում (1887 թ. № 223) նա բացարձակ գրում է, որ «հասարակական փողեր վատնողը սրբապղծութիւն չէ գործում», պատճառաբանելով այդ կարծիքը նրանով, որ «աշխարհ հօ չի քանդվի, եթէ մէկը վատնի իրան յանձնված հասարակական փողերը, դրանով միայն փողն է կորչում»։—Այդպիսի անկեղծ յայտարարութիւն և այն մի խմբագրի կողմից, պ.պ. դատաւորներ, յանցանք է իմ կարծիքով, և եթէ յանցանք էլ չէ, յամենայն դէպս շատ հեռու չէ նրանից։

Այս բոլորից յետոյ պարզ է, որ ոչ միայն պ. Մալումեան, այլ և ամբողջ մամուլը, վերջապէս ամբողջ հասարակութիւնը կարող էր որոշ աստիճանի անվստահութեամբ վերաբերվել այդ կողմից դէպի պ. Սպանդարեանը։ Նոյն իսկ ինքը պ. Սպանդարեան ապացուցանում է, որ պ. Մալումեան չէր միայն, որ իրան կասկածում էր

*) Այդ փողերը յետոյ յատկացվեցին «Նոր-Դարի» լրագրին։

հասարակական փողերը վատնելում, այլ ամբողջ հայ հասարակութիւնը: Ինչպէս ձեզ յայտնի է, նահանգական դատարանում պ. Սպանդարեան պնդում էր, թէ պ. Մալումեանի յայտնի յօդուածի վիրաւորական խօսքերը իրան են վերաբերում, ի միջի այլոց, այն հիման վրա, որ «ամբողջ Կովկասը և ամբողջ մամուլը միմիայն իրան, պ. Սպանդարեանին է մեղադրում զէյթունցիների փողերը իւրացնելու մէջ:»

Անցնենք այժմ մեղադրանքի ամենագլխաւոր կէտին:—Զէյթունցիների օգտին հանգանակութիւն եղել է 1885 թ-ին. այդ ժամանակից մինչև 1887 թ., այսինքն ամբողջ 2 տարի «Նոր-Դարը» լռութիւն է պահպանել ժողոված փողերի մասին և լռութիւնը ընդհատել է միայն այն ժամանակ, երբ «Արձագանք» լրագրի միջոցով նուիրատուներից մէկը հարց է բարձրացրել, թէ ինչ եղան հրկիզեալների օգտին հանգանակած փողերը: Ի պատասխան այդ հարցին պ. Սպանդարեան տպում է նուիրատուների ցանկը, և յայտարարում է, թէ «1,500 ր. ուղարկել ենք այնտեղ, ուր պարտաւոր էինք ուղարկել:» (1887 թ. № 165): Անորոշ պատասխան, որ կարելի էր հասկանալ այն մտքով, թէ փողերը ուղարկված են Թիֆլիսի նահանգապետի միջոցով Հալէպպոյի ռուսաց հիւպատոսին, որովհետև հանգանակութիւնը բանալիս պ. Սպանդարեան յայտարարել էր իր լրագրում, թէ պարտաւորվում է ժողոված փողերը ուղարկել «Թիֆլիսի նահանգապետի միջոցով ռուսաց հիւպատոսին, որպէս զի գումարները ապահով հասնեն իրանց նպատակին» (1885 № 48), իսկ այն ռուսաց հիւպատոսը, որի իրաւասութեան շրջանումն է գտնվում Զէյթունը և որ կարող էր բաժանել զէյթունցիներին այդ փողը, նստում է Հալէպպոյում: Այդպէս կարելի էր հասկանալ պ. Սպանդարեանի պատասխանը, սակայն այդ պատասխանի անորոշութիւնը նոր նիւթ է տալիս ծագած կասկածներին և դանդաղ կողմերից կրկնվում են հարցեր, որոնցով պահանջվում է «Նոր-Դարի» խմբագրից աւելի որոշ պատասխան փողերի գործադրութեան մասին: Պ. Սպանդարեան աւելորդ է համարում պատասխանել այդ հարցերին, սակայն նորից ստիպում են նրան ընդհատել այդ տարօրինակ լռութիւնը: Նուիրատուներից մէկը նկատելով, որ իր ուղարկած փողի մասին չէ յայտարարված «Նոր-Դարում», բացատրութիւն է պահանջում խմբագրից: Պ. Սպանդարեան պատասխանում է (1887 № 166), թէ հիշդ է, նա ստացել է այդ պարոնից «մի փոքրիկ գումար» 10—12 ր., որով ծածկել է 1,500 ր. ուղարկելու պօստային ծախսերը և որ սակայն չէ յիշատակել իր լրագրում, որովհետև այդ գումարը ստացել է հանգանակութիւնը փակելուց յետոյ: Սակայն այդ չէ արգելում պ. Սպանդարեանին մի փոքր յետոյ (1887 № 172) յայտարարել, թէ պօստային ծախսերը խմբագրութիւնն արել է իր հաշուով: Մի հակասութիւն, որ զարմացնում է նոր կասկածներ և նոր հարցեր, թէ ուր և ում են ուղարկված փողերը: Պ. Սպանդարեան պատասխանում է, թէ փողերը ուղարկված են Զմիւռնիա «յայտնի հրապարակախօս պ. Մամուրեանին» (1887 № 181), ուրեմն ոչ այնտեղ, ուր պարտաւորվել էր ուղարկել պ. Սպանդարեան: Կարելի էր ենթադրել, որ պ. Մամուրեան այդ փողերը պէտք է հացներ Պոլիս՝ Զէյթունի հրկիզեալներին օգնելու համար կազմված մանամաժողովին, բայց Պոլսի «Արևելք» թերթը յայտնում է մանամաժողովի անդամների բերանից, որ «մանամաժողովը իր ամբողջ գոյութեան ընթացքում ոչ մի գումար չէ ստացել պ. Սպանդարեանից»: «Новое Обозрѣніе» լրագիրը արտատպելով «Արևելքի» գրածը, պահանջում է պ. Սպանդարեանից բացատրութիւն և որ գլխաւորն է, պօստային անդորրագիր (квитанція): Պ. Սպանդարեան լռում է անդորրագրի մասին և պատասխանում է. «եթէ այդ գործը հետաքրքրում է «Արևելքին», լաւ կանէ, եթէ դիմէ Զմիւռնիա յայտնի վաճառական Լ. Էֆէնդի Պալէօզեանին և այնտեղից կիմանայ, որ զէյթունցիների օգտին ժողովված գումարը իր ժամանակին ուղարկվել է և պահվում է վերոյիշեալ յայտնի վաճառականի մօտ» (1887 № 208): —Ուրեմն Սպանդարեանի նոր յայտարարութեան համաձայն փողերն ուղարկվել են ոչ այնտեղ, ուր պէտք է ուղարկվէին (ռուսաց հիւպատոսին), ոչ էլ պ. Մամուրեանին:—Դարձեալ հակասութիւն, դարձեալ հարցեր,—ինչու զէյթունցիների օգտին ժողովված փողերը ուղարկվել են Զմիւռնիա: Պ. Սպանդարեան պատասխանում է՝ այն նպատակով, որ այդ փողերով դպրոց բանան Զէյթունում: Ուրեմն պ. Սպանդարեան չէ կատարում իր վրա վերցրած պարտաւորութեան ոչ միայն այն մասը, որ վերաբերում է փողը ուղարկելու միջոցին, այլ և այն, որ վերաբերում է նպատակին: Հասարակութիւնը աւելի ևս յուզվում է. մամուլը մի քանի անգամ դիմում է պ. Սպանդարեանին պահանջելով ցոյց տալ պօստային անդորրագիրը, ամենալաւ միջոցը հասարակութեան յուզված միտքը հանգստացնելու, բայց պ. Սպանդարեան յամառութեամբ հրաժարվում է այդ միջոցին դիմել, թէև ինքը իր լրագրում առաջուց յայտնել էր, թէ մի անդորրագրի տեղ կարող է ցոյց տալ մի քանիսը:

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

—

Յուլիսի 2-ին

Այստեղ, Բագու, նաւթ-առևտրական բոլոր գործողութիւնները կատարվում են բացառապէս մակլերների միջոցով: Հարիւրաւոր մարդիկ միջնորդութիւն են անում: Բագուի առևտրական բարդ ու բազմակողմանի կեանքը ստեղծել է ամեն տեսակ գործողութիւնների մասնագէտ միջնորդներ: Խորութիւն չը դնելով միջոցների մէջ՝ դրանք ձեռնարկում են ամեն մի գործ, ինչ որ շահաւէտ է, ինչ որ նպատակայարմար է: Սկսած մօտիքրուլութիւնից՝ գործը տանում հասցնում են կատարութեան... խոկել, գարշել չը գիտեն դրանք. պատրաստ են ամեն մի ապականութեան մէջ խառնվել, ամեն մի զզրելի հրաման կամ պահանջ ի կատար ածել՝ միայն թէ փող դուրս գայ միջից, նիւթական շահ ըստանան: Եւ լիովին վարձատրվում են: Ամենայետին մակլերը, իր անունը ստորագրել չիմացող ազէտ միջնորդը մի երկու շաբաթում աւելի փող է վերցնում քան համալսարանական մասնագէտը մի ամբողջ տարվայ ընթացքում:

Մակլերները բաժանվում են երկու տեսակի. առաջին տեսակը, այդ «բիրժեվոյ» կոչվածներն են, որոնք ընտրվում են և ղեկավարվում են որոշ կանոնադրութեամբ: Դրանք, գլխաւորապէս, նախկին վաճառականներ են, ունեն փոքր ի շատէ անցեալ, հասարակական դիրք և այլն: Դրանց կատարած գործողութիւնները համարվում են օրինաւոր, վերաստուգվում են—մի խօսքով ունեն որոշ վարկ, թէև պէտք է խոստովանել, դրանցից ոչ ոք համարեա իր կոչման բարձրութեան վրա չէ կանգնած, չը կան դրանց մէջ մասնագիտական կրթութիւն ստացածներ, չը կան կանոնաւոր ղեկավարներ. դրանք, գլխաւորապէս, արիւնաբերութեան շահը չեն աչքի առաջ ունենում, այլ անձնական շահը, իրանց գրպանի օգուտը: Նեղ-չարչնական ընթացքով տանում են միջնորդութեան գործը և տանեակ հազարներ դիզում:

Դրանց տարեկան եկամուտի minimum՝ 5—6 հազար բուբլի է, իսկ maximum՝ 15—20 հազար բուբլի, եթէ աչքի առաջ չունենանք բացառութիւնները: Սրանք անցեալում աւելի աջողութեամբ էին հնձում, որովհետև քիչ էին, մրցողներ չը կային, իսկ այժմ այդ դժուարացել է: Դրանց չուտ և հեշտ հարստանալու համբաւը ստեղծել է բաղդախնդիրների մի լեգէօն, որոնք թէև իրաւունք չունեն, բայց դարձեալ պարապում են «միջնորդութեամբ», դարձեալ գործողութիւններ են կատարում, առ ու ծախս անում—գլխաւորապէս մութ անկիւններում, խաներում, յետ ընկած հիւրանոցներում: Դրանք մասնաւոր մակլերներ են, որոնք ամեն տեղ, առևտրական աշխարհի ամեն մի անկիւնում «зайчикъ» (նապաստակ) անուն են ժառանգում:—Այստեղի հարիւրաւոր «зайчикъ»-ների մէջ կան ներկայացուցիչներ բոլոր ազգութիւններից, սակայն առաջին տեղը բռնում են հրէաները և հայերը: Սրանք—բոլորը—առանց խարութեան աղի ու կրօնի՝ մարդկային այլանդակութիւններ են, բարոյական հրէշներ: Ոտի տակ տուած մարդկային արժանիքը՝ սրանք անխիղճ կերպով խաբում, ստում, չողոքորթում, քծնում են: Չը կայ պատիւ, չը կայ նամուս դրանց համար: Թքում էք երեսներին՝ ժպտում են. պպանակում հայհոյում էք՝ կատակներ են անում. գրասենեակից դուրս էք գցում՝ տուն են վազում. տնից էք վռնդում՝ փողոցումն են ձեր առաջը կտրում և հաղար ու մի ստորաքարշ մոտիվներով ուշադրութիւն վատակում, գործ առաջ տանում:

Չը նայելով «зайчикъ»-ների՝ ընկած դրութեան, չը նայելով նրանց զզուելի արարքներին և կրած ընդհանուր ատելութեան, այնու ամենայնիւ նրանք աջողութիւն են գտնում, և ի խայտառակութիւն առևտրականների՝ փող վատակում, կապիտալիստներ դառնում:—Պատճառը դարձեալ չահախնդրութիւնն է: Մի օպերացիա, որ կատարում է բիրժեվոյ մակլերը և ստանում, դիցուք 1000 բուբլի, նոյն օպերացիան կատարում է «зайчикъ»-ը 100—300 բուբլիով: Հարիւր—հազար պուդերով նաւթ են վաճառում, նաւթ գնում. բիրժեվոյ մակլերը վաճառած կամ գնած նաւթի արժէքից իւրաքանչիւր մի բուբլուց պիտի ստանայ մի կոպէկ, «зайчикъ»-ը ճշդութեամբ նոյն գործողութիւնը գլուխ է բերում 1/4 կոպէկով, կամ էլ պակաս...

Նաւթային գործերի վերջին ժամանակի աջողութիւնը չատ նպաստել է «зайчикъ»-ների բազմանալուն. տեղից վերկացողը «միջնորդութեամբ» է պարապում, նոյն իսկ ծառայողներ, պաշտօնները թողած՝ մակլերութիւն են անում: Բագու չատ հեշտ է չուտ հարստանալ. նոյն իսկ «зайчикъ»-ութիւնը դժուար չէ այստեղ. դրամագլուխ, կանխիկ դրամ, պրոտեկցիա այնքան էլ հարկաւոր չէ. հարկաւոր է ճարպիկութիւն և քծնելու, ստորանալու յատկութիւն միայն. ով աներես է, ով լպիրշ կերպով մտնել, դուրս գալ գիտէ, ում համար պատիւը, ազնուութիւնը փոշի է—նա այստեղ միշտ աջողութիւն կարող է գտնել և առաջ գնալ...

P. S. Մեր քաղաքի «зайчикъ»-ների ստուար խմբին աւելացել է այս քանի օրերս և մի հայ «зайчикъ»՝ «յայտնի մանկավարժ», «պուբլիցիստ-քննադատ» և Թիֆլիսի հայոց դաշնակից թերթերի գլխաւոր աշխատակից Ց. Ճ., որը նոյնպէս սկսել է «միջնորդութեամբ» պարապել:

Ն. Դաւթեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեր թղթակիցը Կ. Պոլսից մեզ հետեւեալ լուրն է ուղարկել: «Մոնիդէօռ» կըսէ, թէ Զէյթուն գաւառակին նոր գայմագամ Եուվանաքի էֆէնտի քիչ օրէն իր պաշտօնատեղին պիտի ուղևորվի: Այդ թերթը կուտայ նաև հետեւեալ տեղեկութիւնները. «Եուվանաքի ճազօբուլօ էֆէնտի օսմանեան պետութեան վաղեմի ծառայողներէն է: Կայսերական քաղաքային վարժարանին մէջ իր ուսումն աւարտելէ ետք, Արշիպեղագոսի Բսարա կղզին գայմագամ անուանեցաւ և 4 տարի վարեց այդ պաշտօնը: Անկէց փոխադրուեցաւ Նիգարիա կղզին, ուր 3 տարի մնալէն ետքը, Եունտայի (Մասգոնիսիա) գայմագամ անուանեցաւ, և 6 տարի պաշտօնավարեց հոն»:

—

Լսում ենք, որ Ներսիսեան դպրոցի հոգաբարձուներից կազմած մի յանձնաժողով այցելեց Թելեթ ուխտատեղը և մանրամասն քննելով այնտեղ եղած չինութիւնները, եկաւ այն եզրակացութեան, որ պէտք է ձեռնարկել ամենահիմնական վերանորոգութեան: Հոգաբարձուները կարծում են, որ այդ վերանորոգութիւնը նոյն իսկ կարող է իր ծախսը հանել, որովհետև ուխտաւորների թիւը ներկայումս զգալի կերպով չէ աւելանում, յարմարութիւնների բացակայութեան պատճառով:

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի հայոց Հրատարակչական ընկերութիւնը ձեռնարկել է տպագրութեան «Ազգային ջոջերի» երրորդ հրատարակութեան: Այս հրատարակութեան մէջ կը մտնի Գրիգոր Արծրունու կենսագրութիւնը, որը առաջինում չէ եղել:

—

Հասարակութիւնը չէ մոռացել, որ անցեալ տարի յաճախ պատահում էին Անդրկովկասեան երկաթուղու գծի վրա աւերումներ՝ հեղեղների պատճառով: Որպէս զի հեղեղների քանդածը կարելի լինի չուտով վերանորոգել և նոր աւերումների առաջն առնել, Պետերբուրգից ուղարկվել էին մի քանի ինժենէրներ՝ այդ գործը աջողութեամբ առաջ տանելու համար: Սակայն այդ նոր եկած ինժենէրներից մէկը, միանալով տեղացի երկու ուրիշ պաշտօնեաների հետ, աւելի լաւ են համարում լցնել իրանց դրպանները, քան թէ նորոգել քանդված ճանապարհը ինչպէս հարկն է: Զիատուրի գծի վրա գործվում են մի չարը զեղծումներ.—բանուորներին չեն վճարվում նրանց աշխատանքի և գառն քրտինքի վարձը. չինվում են կեղծ պպացուցագրեր չը կատարված ծախսերի համար և այլն: Բանն այնտեղ է հասնում, որ բանուորները մինչև անգամ, ինչպէս հաղորդում է «Кавказъ» լրագիրը, մի փոքր խռովութիւն (բունտ) են սարքում: Սակայն զեղծումների հերոսները աշխատում են ծածկել ամեն բան և Պետերբուրգից եկած ինժենէրը, գրպանները լցնելով, վերադառնում է իր տեղը, յայտնելու, որ իր պաշտօնը աջողութեամբ կատարել է: Բոլորովին պատահաբար չարագործութիւնները և զեղծումները երևան են գալիս. այդ զեղծումներին մասնակից բանուորների մի վարպետ մի շաբաթվայ ընթացքում կորցնում է իր կնոջը և 3 երեխաներին, և կարծելով թէ Աստուած պատժում է իրան իր մեղքերի համար, ապաշխարում է և եղելութիւնը յայտնում իշխանութեանը: Խոկոյն կատարվում է քննութիւն և ամեն բան բացվում է: Քննութեան արդիւնքը Անդրկովկասի երկաթուղու վարչութիւնը ներկայացրել է Պետերբուրգ, խնդրելով դատաստանի ենթարկել մասնակից բոլոր յանցաւորներին:

—

Կ. Պոլսի մեր թղթակիցը մի արդարացի նը-կատողութիւն արեց Իզմիրեան կտակի յանձնաժողովի դէմ, որը, իբաւ, իրան թոյլ է տուել ծածուկ, գաղտնի պահել յանձնաժողովի որոշումները, ծածուկ կերպով էլ մրցանակ է յատկացրել: Այդ բոլորը արտայայտված է և Կ. Պոլսի հայոց մամուլի մէջ: Արժանաւոր է թէ ոչ մրցանակին արժանացող գիրքը,—այդ մասին առ այժմ մենք դատաւոր լինել չենք կարող, քանի որ չունենք մեր ձեռքի տակ ընդունված աշխատութիւնը. բայց մենք ոչ մի կերպ արդարացնել չենք կարող յանձնաժողովի ձգտումը՝ ամեն բան կատարել վարագոյրի ետև, ծածուկ, ոչհրապարակական կերպով: Այդ փաստն արդէն մեծ ստուեր է գցում յանձնաժողովի գործունէութեան վրա:

—

Մեզ հաղորդում են, որ մանդատ վ. Գէորգի այս օրերս ուղևորվելու է Բագու՝ Մաշտաղ գիւղում բացվելիք այգեգործական դպրոցն այցելելու համար:

—

Երկրագործութեան մինիստրութիւնը, ցանկանալով ընդարձակել Թիֆլիսում գտնվող բուսաբանական այգին, գնել է այդ այգուն կից մի կտոր հող, որի վրա պէտք է զանազան ծառերի անկարաններ գցվեն:

—

Պրոֆէսօր Մենդէլէեվ, այցելելով Նիժնի-Նովգորոդի ցուցահանդէսը, գոհ է մնացել ռուսաց արդիւնագործութեան արած նշանաւոր առաջադիմութիւնից: Պրոֆէսօրի կարծիքով, կառավարութեան բռնած ներկայ արդիւնագործութեան քաղաքականութիւնը՝ խելացի է:

—

Մենք ստացանք երկրագործութեան մինիստրի լիազօրի դիւանատան հետեւեալ նոր հրատարակութիւնները. «Сборникъ свѣдѣній по виноградарству и винодѣлію на Кавказѣ», տետրակ IV, V և VI: Առաջին գրքում նկարագրված է Բութայիսի նահանգի, երկրորդում՝ Բագուի նահանգի և երրորդում՝ Երևանեան նահանգի վաղատպութիւնը և գինեգործութիւնը: Բագուի նահանգից հետազօտված են Շամախու և Գէօկչայի գաւառները: Հետազօտողն է պ. Կանդուրաչեան: Երևանեան նահանգի ուսումնասիրութիւնը 200 երեսից կազմած մի աշխատութիւն է և պարունակում է այդ նահանգի գինեգործութեան մասին մանրամասն տեղեկութիւններ: Հետազօտողն է իշխ. Ի. Անդրոնիկով: Բութայիսի նահանգը հետազօտել են Ս. Տիմոֆէեվ և Ե. Նակաշիձէ: Այդ հրատարակութիւնները ծախվում են Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան մօտ և գրավաճառանոցներում:

—

ՇՈՒՇՈՒՑ. Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղի վարչութիւնը խնդրում է մեզ տպագրել հետեւեալը. «Վարչութիւնը յայտնում

է իր խորին շնորհակալութիւնը Միրզա Տէր-Սարգսեանին, որը նուիրել է ընկերութեան գրադարանին իր հանգուցեալ եղբօր՝ Դաւիթ Տէր-Սարգսեանի յիշատակին 33 կոտոր գրքեր և պարբերական հրատարակութիւններ՝ 134 բուրլու արժողութեամբ»։

—

ՀԱԴՐՈՒԹ գիւղի մէջ տեղի ունեցող մի տգեղ դէպքի մասին մեզ խնդրում են տպագրել հետեւեալը։ «Ահա մօտ երկու ամիս է, որ մեր գիւղում մի քանի անձինք սովորութիւն են դարձրել ծածուկ թերթեր տարածել՝ այս և այն մարդուն արտաւորելու նպատակով։ Այդ թերթերը, որոնց անունը յօրինողները դրել են «Կայծակ», կպցնւում են գիշեր ժամանակ կամ եկեղեցու դրան, կամ փողոցների պատերի վրա և կամ խանութների դռներին, որպէս զի առաւօտը ժողովուրդը կարդայ։ Գաղտնի կերպով այդ ձեռագիր թերթեր կազմողները յարձակվում են գլխաւորապէս գիւղի այժմեան տանուտէրի վրա։ Ներկայ դէպքում հետաքրքրականը, ի հարկէ, այն չէ, թէ ինչ են գրում այդ թերթիկների մէջ, այլ այն, որ այդպիսի անմաքուր, անօրէնի և անվայել միջոցի են դիմում՝ մէկին արտաւորելու, միւսից վրէժ առնելու, կամ երրորդին հալածելու համար։ Գիւղական գործերը կարգի բերելու համար կան ազնիւ, բացարձակ միջոցներ, որոնց թողած՝ անատարագիր թերթերին կամ նամակներին դիմելը՝ կատարեալ անբարոյականութիւն է, որի առաջը պէտք է առնել»։

—

ԳՕՐԻ գաւառից հաղորդում են, որ Ցխինվալի մօտերքը նոր տեղեր են գտնվել, ուր ֆիլոկսերան սկսել է տարածվել։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայոց «Իրաւունք» լրագրի մէջ կարդում ենք. «Տէյլի Ռիքօռտ» լրագիրը կիմացնէ թէ Կասկովի մէջ տեղի ունեցեր է միթինկ մը, որ որոշեր է նոյն քաղաքի հայկական ընկերակցութեան ճիւղին օժանդակ մասնախումբ մը կազմել կիներէ։ Ընկերակցութեան հաւաքած դրամները այս ամառ պիտի խրկուին Վանի մէջ կազմակերպեալ ձեռարուեստական հաստատութեան՝ Ամերիկեան բժիշկ միսիոնառ տօքթ. Կրէյս Քիմպալի միջոցաւ»

—

«Daily News» լրագիրը հաղորդում է, որ կրէտացիները նոր պայմաններ են առաջարկում՝ ապստամբութիւնը դադարեցնելու համար։ Նրանք անպատճառ ցանկանում են ունենալ իրանց դրօշակը՝ վրան խաչ նկարած. խաչի նշանը և նրա վերնագիրը յունարէն լեզուով պէտք է փոխարինված լինի Կրետէի գեներալ-նահանգապետի բոլոր կնիքների վրա։ Բացի դրանից, նրանք պահանջում են, որ սուլթանին վճարվելի հարկի քանակութիւնը որոշի ազգային ժողովը, ինչպէս և նա որոշի կրէտական պահակազօրքի քանակութիւնը և ոչ սուլթանը։ Սուլթանը, ընդհանրապէս, պէտք է ենթարկի ազգային ժողովի քննութեան և հաստատութեան բոլոր այն կանոնները և օրէնքները, որ կամենում է մտցնել Կրետէի մէջ։

—

Կ. Պոլսից հեռագրում են «Daily Messenger» լրագրին, որ 200 հոգի, որոնց թւում շատ թիւրքեր, հայեր և յոյներ, արտաքսված են Կ. Պոլսից՝ Բէյրութ, Տրիպոլի և Սինոպ։

—

«Daily News» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը հաղորդում է յունիսի 29-ից. «Այստեղ տեղեկութիւններ են ստացվել Վանից, որոնք ցոյց են տալիս, թէ մահմետական ֆանատիկոսութիւնը նորից բռնկվել է։ Միայն անգլիական հիւպատոս Վիլիամսի միջամտութեան շնորհիւ, ջարդը ընդհանուր չը դարձաւ։ Վիլիամս հրամայեց բարձրացնել բրիտանական դրօշակը ամերիկական միսիայի տան վրա, որ քաղաքի ամենաընդարձակ շինութիւնն է և յայտնեց, թէ նա այդտեղ է փոխադրում բրիտանական հիւպատոսարանը։ Մի և նոյն ժամանակ նա առաջարկեց բոլոր կանանց և երեխաներին ապաստանել հիւպատոսարանի մէջ։ Երկու ամերիկացի միսիոնէրներ զբաղվեցին վիրաւորեալների փոխադրութեամբ և ամբողջ օր աշխատում էին, որովհետև վիրաւորվածները բազմաթիւ էին և վէրքերը չատ ծանր։ Վիրաւորվածների մէջ կային ոչ միայն կանայք, այլ և երեխաներ»։

—

Կ. Պոլսից հեռագրում են, որ ֆրանսիական դեսպան Կամբոնը պահանջում է գլխատել երկու թիւրք զինուորների, որոնք Կ. Պոլսի փողոցներից մէկում անպատուել են երկու կրօնաւորուհիներին։

—

Լօնդօնից հեռագրում են յուլիսի 3 ից. «Երիտասարդ Թիւրքիայի կուսակցութեան գլխաւոր կոմիտէը հրատարակել է մի նոր կոչում՝ ուղղված Եւրոպայի կառավարութիւններին և ազգերին։ Երիտասարդ Թիւրքերի կուսակցութիւնը դիմում է արևմտեան Եւրոպային յանդիմանելով նրան, որ մեծ պետութիւնները թոյլ տուին ոչնչացնել սահմանադրութիւնը Թիւրքիայում, մինչդեռ Ռուսաստանը սահմանադրութիւն շնորհեց Բոլգարիային։ Ապա յայտարարութեան մէջ ասված է, թէ «երիտասարդ Թիւրքիա» կուսակցութիւնը պաշտպան է Թիւրքիայի ամբողջութեան և անձեռնմխելիութեան, նրա այժմեան զինաստիայով, բայց մի և նոյն ժամանակ նա պահանջում է, որ կատարեալ և բարեխիղճ կերպով իրագործվեն բոլոր ֆիրմանները և այն արտօնութիւնները, որ սուլթանը շնորհել է օսմանեան կայսրութեան ժողովուրդներին»։

ԷԴՄՕՆ ԳՕՆԿՈՒՐ

—

Հեռագիրը հաղորդեց, որ յուլիսի 5-ին, կաթուածից վախճանվեց ֆրանսիական յայտնի գրող Էդմօն Գոնկուրը։ Նա, ինչպէս և իր եղբայր Ժիւլ Գոնկուր, որ մեռաւ 1870 թ-ին, պատուաւոր և նշանաւոր տեղ են բռնում ֆրանսիական գրականութեան մէջ. նրանք համարվում են հիմնադիրներ այն դպրոցի, որ առաջ բերեց նատուրալիստական ուղղութեան ոմանը, այն դպրոցի, որի փայլուն ներկայացուցիչներն եղան ապագայում Զօլա, Մօպասան, Հիւսման և ուրիշները։

Էդմօն ծնվել է 1822 թ-ին, իսկ Ժիւլը 1830 թ-ին։ Մանկութիւնից անբաժան, նրանք ձեռք բերին մի և նոյն հակումները, մի և նոյն ճաշակը և սկսեցին միասին աշխատել գրականական ասպարիզում։ Բնութիւնից օժտված լինելով գեղարուեստական հակումներով, երկու եղբայրները անձնատուր եղան հին շրջանների գեղարուեստական հնութիւնների ուսումնասիրութեան և սկսեցին գրել երկասիրութիւններ ու պատմական աշխատութիւններ 18-րդ դարի կեանքից. այդ երկասիրութիւնների մէջ արդէն արտայայտվեց նրանց գրական տաղանդի ամբողջ էութիւնը և յայտնվեց, որ նրանք կենցաղագէտ—գեղարուեստաւոր գրողներ են, կարողանում են նուրբ կերպով ըմբռնել և արտիստական կերպով առանդել կեանքի արտաքին կողմերը, մարդկանց սովորութիւնները և ճաշակը, այդ ճաշակի բոլոր քմահաճոյքները, մի խօսքով մարդկային կեանքի բոլոր արտաքին կողմերը իր մանրամասն նկարագրութեան մէջ։ Պատմական երկասիրութիւններից անցնել ոմանին, արդէն դժուար չէր և Գոնկուր եղբայրները սկսեցին գրել ոմաններ ժամանակակից կեանքից։ Նրանք նկատում էին ոմանը, իբրև մի «պատմութիւն, ինչպէս նա կարող է լինել»։ Նրանք իրանց նպատակ դրին նկարագրել ճշմարտութիւնը իր ամբողջ մերկութեամբ, անխնայ լինել և ոչինչ չը ծածկել. նրանք ըսկսեցին ուսումնասիրել կեանքը, ինչպէս նա կայ։ Եւ այդ նպատակին հասնելու համար, եղբայր Գոնկուրները ամբողջ շաբաթներ, ամիսներ էին գործ դնում այցելելով հիւանդանոցները, բանտարկեալները, խուլ անկիւնները։ Այդ հետազօտութեան հետևանքն եղան մի շարք ոմաններ, որոնց մէջ հեղինակների երևակայութիւնը ամենափոքր դերն է խաղում, իսկ գլխաւոր տեղը բռնում է ուսումնասիրութեան հետևանքների ճշգրիտ վերլուծութիւնը։ Այդ է պատճառը, որ Գոնկուր եղբայրները իրանց ոմանների համար հերոսներ չեն վեր առնում բացառիկ և արտակարգ ընդունակութիւնների տէր անձանց, այլ ընտրում են յաճախ կրաւորական բնութեան տէր մարդկանց, առանց որոշ անհատականութեան, այնպիսի բնաւորութիւններ, որոնք շատ հեշտ ենթարկվում են շրջանի ազդեցութեան և անկարող են լինում դիմադրել նրան։ Մի խօսքով նրանք իրանց ոմանների մէջ նկարագրում են կեանքը, ինչպէս կայ և հէնց դրա համար համարվում են նատուրալիստական դպրոցի հիմնադիրներ կամ Զօլայի ուղղութեան նախակարապետներ։ Նրանց ամենալաւ ոմանները, որոնց մէջ արտայայտված է այդ ուղղութիւնը, համարվում են հետևեալները՝ «Germinie Lacerteux» (1865 թ.). «Renée Mauperin» (1864 թ.), «Soeur Philomène» (1861) և «Madame Gervaisais» (1869).

Ժիւլ Գոնկուրի մահից յետոյ, Էդմօնը չարունակեց գրել ոմաններ, որոնք, սակայն, ներշնչված չեն այն խոր զգացումներով, որ յատուկ էր երկու եղբայրների հեղինակութիւններին։ Պարզ երևում է, որ եղբայրները լրացնում էին միմեանց և մէկի պակասութիւնը ձուլվում էր միւսի կատարելութեան մէջ։

Խիստ հետաքրքրական է երկու եղբայրների ինքնակենսագրութիւնը, որ հրատարակեց Էդմօն Գոնկուրը եղբօր մահից յետոյ և որի պատճառով նա ենթարկվեց և հալածանքի, որովհետև այդ ինքնակենսագրութիւնը, որ կրում է «Գոնկուրների Օրագիր» վերնագիրը և վերաբերում է 50—70 թուականներին, շատ հետաքրքիր և հարուստ նիւթ է բովանդակում իր մէջ այդ շրջանի մտերմական կեանքի վերաբերմամբ։ Պոլ Բուրժէ, Էմիլ Զօլա, Լէմէտր ընդարձակ, գեղեցիկ ու հետաքրքրական յօդուածներ են նուիրել Գոնկուր եղբայրների գրականական գործունէութեան նկարագրութեան։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պոլիս, յունիսի 29-ին

Վերջին նամակս կնքած էի ծանուցագրի պատճէնով մը, զոր Պոլսոյ հայերը ուղղեցին յունիս 18-ին եւրոպական վեց պետութեանց ներկայացուցիչներուն։ Այդ ծանուցագրին մէջ դրած էին հայերը իրենց յուսահատութեան դառնութիւնը, մերձաւոր յուսահատական ծայրայեղութեան մը պատասխանատուութիւնը ձգելով Թիւրք կառավարութեան վրա։ Թիւրք կառավարութիւնը, զինքը տանջող այնքան բազմաթիւ խնդիրներուն մէջ, վայրկեան մը չը մոռցաւ հայերը։

Ու այս ամենուն վրա եկաւ աւելցաւ կախաղանը։ Սուլթանը սկսաւ իրարու ետեւէ վաւերացնել հայերու մահուան վճիռները, զոր առանց մեծ դժուարութեան կարձակէին իր պաշտօնեաները. մինչդեռ ոճրագործ Մուսդաֆաներ, արիւնկլակ Սուլէյմաններ, աւազակ Եանքօներ «Ն. Կ. Վեհափառութեան ներման կարժանանային»։ Ինչպէս բացատրած էի առջի նամակներուս մէջ, կախուող հայերը անմեղներ էին։ Անմեղ մըն էր նաև վերջին կախուողը, յունիսի 17-ին, Գալուստ Աստուրեան, իբր սպանիչ ամբաստանուած լըրտես Համբարձում էֆէնտիի։ Գալուստ, մինչև չուանը ճիտը ձգուիլը, յայտարարած է թէ ինք անմեղ մըն է։

Անցեալ անգամ հաղորդեցինք կախաղանի դադարման մասին։ Արդեօք դա նշան մըն է ձերբակալութեանց, աքսորներու և ամէն տեսակ հարստահարութեանց դադարման ալ։ Կարելի չըլլալով հիմակուընէ որոշ բան մը ըսել, կը սպասենք արդիւնքներուն։ Պոլսոյ մէջ ամէն պատահականութիւն ընդունելու պատրաստ պէտք է ըլլալ։

Պ—ի

ՆԱՄԱԿ ԲՈԼԳԱՐԻԱՅԻՑ

—

Ռուսճուք, յունիսի 20-ին

Յունիսի 16-ին տեղւոյս Մակեդոնական ընկերութիւնը մի միթինգ գումարեց Ալէքսանդրովսքի հրապարակի վրա։ Արդէն մի օր առաջ, ամսիս 15-ին, կարմիր հրաւիրագրեր կը ցրուէին փողոցները հետեւեալ բովանդակութեամբ.

«Ռուսճուքի Մակեդոնական ընկերութիւնը կը հրաւիրէ բոլոր Ռուսճուքի քաղաքացիները—առանց տարբերութեան կուսակցութեան—ներկայ գտնուիլ միթինգին, որ տեղի պիտի ունենայ կիրակի օր, ամսոյս 16-ին, եկեղեցական արարողութենէ վերջ, նոր կառուցելիք հասարակաց պարտիզին մէջ։ Սոյն միթինգին մէջ նկատողութեան պիտի առնուին վերջերս Մակեդոնիոյ և Օդրինի խոստացուած բէֆորմները։ Ընկերութիւնս կը յուսայ թէ՝ իւրաքանչիւր քաղաքացի՝ զգայող ազատութեան դատին ներկայ պիտի գտնուի սոյն միթինգին։» (Կնիք)։

Անկեղծ խօսելով, կը գտնուին պուլղարաց մէջ ևս այնպիսի սիրատունեցողներ, որոնք կը զգան Մակեդոնիոյ մէջ իրենց եղբարց կրած դառն տառապանքները։ Միթինգին գրեթէ 5,000 հոգի ներկայ էր. խօսեցան 3 օրթօրներ՝ տեարք Բաբչէվ, Բանայթով և Սթոյքով։

Միթինգը որոշեց՝

1) Բողոքել Թուրքին խոստացած բէֆորմներու դէմ։ 2) Ազաչել պուլղարական կառավարութեան, որպէս զի խիստ միջոցներ ձեռք առնէ՝ բարենորոգումները գործադրել տալու համար։

Յ. Գէորգեան

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թաւրիզ, յունիսի 25-ին

Սօուղ-բուլաղում, յունիսի 10-ին, մահմետականների կրօնական սուգի օրը, սարսափելի ընդհարում է տեղի ունեցել պարսիկների և քրդերի մէջ։ Քիւրդերը, որոնք դաւանութեամբ սիւնի են, ծաղրում են այդ կրօնական արարողութիւնը։ Կատաղած պարսիկ ամբոխը յարձակվում է քիւրդերի վրա և մեծ կորուստ տալով, յետ է մղվում։ Նահանգապետը հեռագրով դիմում է այստեղի վարչութեանը, իսկ ինքն իր կողմից ամեն միջոց գործ է դնում ճնշելու քիւրդերին։ Մինչ օրս երկու կողմի կորուստը մի քանի հարիւրների է հասնում։ Երէկ 4,000 զօրք և լեռնային թնդանօթներ ուղարկվեցան։

Վատ լուրեր են հասնում և Ասորեստանից. քիւրդերը սպանել են Ուրմիի ասորոց եպիսկոպոսին, որը Մար-Շիմօնի մօտից 12 հոգով վերադառնալիս է եղել։ Սպանված են և եպիսկոպոսի ընկերները։ Աւելի ոչ մի տեղեկութիւն չունենք։

Արտաւազդ

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԻՑ

—

Պոստօն, յունիսի, 18-ին

Նորերս Նիւ-Եօրքի մէջ հրատարակվեց մի գրքոյկ, որ «Horrore of Armenia» անունը կը կրէ։ Այդ գրքի հեղինակը, պ. Հովըրտ, իր խօսքով, երկար ատեն ճամբորդած է Հայաստան և լուրջ կերպով ուսումնասիրած է հայկական խնդիրը նոյն իսկ իր բնական հողին վրա։ Ցառաջաբանէն այդ բանը իմանալով, բնականաբար, ընթերցողը կը պատրաստուի մի կարևոր խորհրդակցութիւն լսելու։ Դժբաղդաբար, Հայաստանի թշուառ կացութիւնը այնքան սոսկում և զայրոյթ պատճառեր է եանկի հայասէրին, որ իր մտաւոր բոլոր ոյժերը ամփոփել է հայհոյելու թիւրքերուն, քիւրդերուն և իրենց կրօնին, իսկ հայերը ներկայացուած են իբրև մարմնացած հրեշտակներ, որ երկնային դիւցազնութեամբ կը համբերեն բոլոր հարստահարութեանց դէմ՝ հանդերձեալ կենաց վարձատրութեան յուսով։ Զարհուրելի լեզուն և պարզ իրողութիւններ, մեր կարծիքով, շատ աւելի պերճախօս են, քան հետևեալներուն նման մի կարգ բացատրութիւններ. «Թիւրքը սատանայ մ'է, որդ միայն պոչ մը կը պակասի», «քիւրդերը դժոխքէն փախած դեւեր են», «Հայաստանէ մէկ ծայրէն մինչև միւսը 9 տարեկանէն ի վեր բռնաբարուած հայ կոյս կամ հարս չէ մնացեր» և այլն, և այլն։

Շատ պարզ է, թէ այս կարգի մոլեռանդ հրատարակութիւններ աւելի կը վնասեն հայկական խնդրին՝ զայն միայն մի կարգ կրօնամոլ քարոզիչներու մենաւաճառ դարձնելով։ Հայոց մարդկային արդար իրաւունքները ձեռք բերելու համար հարկ չը կայ հայհոյել Մուհամմէդին և իր կրօնին, և ոչ ալ նոր խաչակրութիւն մը քարոզել. եթէ Ամերիկան և Եւրոպան սոսկ մարդկութեան և քաղաքակրթութեան պահանջը կատարելու չափ անձնուէր լինեն, Արևելքի քրիստոնէից պահանջները բոլորն ալ կիրագործուին։

Անցեալ մէկ երկու շաբաթները նոյն ուղղութեամբ գրուած յօդուածներ եղան Նիւ-Եօրքի և Պոստոնի թերթերուն մէջ. Մանկասարեան քաղաքեց այդ եռանդոտ հայասէրներու դէմ. «Հայոց դատը այնքան սուրբ և իրաւունքը այնքան հզօր է, որ ամենին հարկ չը կայ թիւրքը կամ մահմէտականութիւնը անդոսնելու» ըսելով։ Սակայն ով կրնայ այս պարոններուն զայրոյթը պակասեցունել, քանի որ այնքան ապահով և պատուաբեր է այժմ չանթեր տեղալ

«քրիստոնէութեան այս դարեւոր ոխերիմ թշնամեաց» գլխին։

Մեր գրքոյկին հեղինակը միակ ճամբայ մը գտած է հայկական «տաղնապալից» հարցը լուծելու—գաղթականութիւն։ Պարոնը կը խոստանայ 1,000,000 տօլարով վեց ամսուան միջոցին բոլոր Թիւրքիոյ հայերը Ամերիկա փոխադրել (բնականաբար Պոլիսը և շրջակաները դուրս թողլով), սակայն որպէս զի սուլթանը չիմանայ գաղտնիքը, ծրագրին մանրամասնութիւնները հրապարակ պիտի չը հանուին. այժմ կարեւորը միայն դրամն է, ուրեմն ստակ հանգանակելու է ցանկացեալ միլիոնը ձեռք բերելու։ Հետաքրքիր է իմանալ, թէ ինչ նոր հնարքներով Թիւրքիոյ խորերէն հարիւր հազարներով ազգատ, անօթի հայեր ապահովաբար կրնան փոխադրուիլ Ամերիկայի միջին նահանգները։ Մաքսիմի և Լանկլիի օդանաւերը դեռ չը կատարեալգործուեցան. Էդիսընի հայրենակիցը անչուշտ մի մեքենայ գտած լինելու է Հիրշին 8—9 միլիոններով կատարել չը կրցածը մէկ միլիոնով կատարելու։ Եւ տակաւին կը յուսացուի, թէ Կարմիր Խաչի պէս ընկերութեան մը միայն 150,000 տօլար տուող ամերիկացի քրիստոնեաներ, այն ալ այնքան աղմուկէ վերջ, այսօր մի քանի չաթուան միջոցին միլիոն մը պիտի ստորագրեն հայերը փոխադրութեամբ փրկելու համար։ «Ո՛վ երկնային միամտութիւն...»։

Արմէն

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Nord» լրագիրը հաղորդում է, որ թիւրքալբանական զինուորները, որոնք գտնվում են յունական սահմանագլխում և վարժ են աւազակութիւններ անելու մէջ, անցել են սահմանից և փորձել են զբաղվել իրանց արհեստով—աւազակութեամբ, յունական հողի վրա։ Ցոյն զինուորները տեսնելով այդ՝ չրջապատել են նրանց և գերի առնելով, տարել են Լարիսա։

—Վիէննայից հեռագրում են «Новости» լրագրին, յուլիսի 4-ից. «Կրետէից եկած տեղեկութիւնները յայտնում են, որ այդտեղ տիրում է կատարեալ անիշխանութիւն։ Թիւրքերը հիմնայատակ են արել քրիստոնէական եկեղեցիների մի ամբողջ չարք։ Բազմաթիւ կանայք սպանված են։ Հիւպատոսները զուր տեղ բողոքեցին թիւրքերի գործած գազանութիւնների դէմ։ Աբդուլ-լահ փաշան զործում է ինքնակամ, ուշադրութիւն չը դարձնելով այն հրահանգների վրա, որոնք տրված են կղզու նոր նահանգապետին»։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 յուլիսի։ Յուլիսի 7-ին Սերեբրեանկում վախճանվեց Նիկոլայ Անտիպովիչ Պոստէլին։

Օգոստոսի 2-ին կը գան մօտ 100 ամերիկացի տուրիստներ և կը մնան Պետերբուրգում մինչև օգոստոսի 10-ը, ապա կերթան Մոսկվա, Նիժնի և վերադարձին կայցելեն Կիեվ։

«Новости» լրագիրը հաղորդում է, որ երկրագործութեան մինիստրը յուլիսի կէսին արձակուրդով գնում է արտասահման։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ, 8 յուլիսի։ Զրի բնակարաններից օգտվելու իրաւունք ունեցող ուսուցիչների գալը չարունակվում է։ Յունիսի 1-ից եկել են $1\frac{1}{2}$ հազարից աւելի ուսուցիչներ։ Ուսուցչուհիներ եկել են 600։ Գիտական բաժանմունքը մանկավարժական զրոյցներ է կազմում նրանց համար։ Մանկավարժական բաժնի կառավարչին մի ուղերձ ներկայացրին ուսուցիչները։ Ուրիշ քաղաքներից խմբերով եկող աշակերտներին տեղաւորում են զպրոցներում. հատ հատ եկող աշակերտները ձրի բնակարան չեն ստանում։

Եկողների թիւը անագին է։ Հիւրանոցները լցված են։ Այսօր բոլոր գնացքները լցված եկան։ Ցուցահանդիսում մօտ 15 հազար այցելուներ կան։

Կ. ՊՕԼԻՍ, 8 յուլիսի։ Հաւրանում թիւրքաց տարած յաղթութեան նշանակութիւնը չափազանցրած է. դրուշների ոյժերը երկրի ներսում, մանաւանդ լեռներում, դեռ նշանաւոր են։ Վերջին օրերը տեղի ունեցան բազմաթիւ ընդհարումներ։ Դեռ վաղաժամ է ասել՝ թէ դրուշները կատարելապէս ընկճված են։

ՀՌՈՄ, 8 յուլիսի։ Հաստատվում է, որ վիսկոնտի-Վենոստա ընդունեց արտաքին գործերի մինիստրութեան պորտֆէյը։

ԼՕՆԴՕՆ, 8 յուլիսի։ Բուլուվայօից հաղորդում են, որ յուլիսի 5-ին 1,600 անգլիացիներից և տեղացիներից կազմված զօրաբաժինը, գեներալ կօրբինգտոնի հրամանատարութեամբ, գնաց զէպի Մատօպպօ լեռները՝ այնտեղ հաւաքված ապստամբների վրա յարձակում գործելու համար։

ՆԻՒ-ԵՕՐԿ, 8 յուլիսի։ «Herald» լրագիրը հեռագիր ստացաւ Կէյվէսթից, որ յուլիսի 3-ին սպանիացիները, գեներալ Թուարէս Ինկլանի հրամանատարութեան տակ, Մացէօսի մօտ զգալի պարտութիւն կրեցին. սպանվեցին 14 օֆիցէրներ և սպանվեցին ու վիրաւորվեցին 300 զինուորներ։ Լաւ է պատում, որ գեներալ Ինկլան գերի է բռնվել։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 յուլիսի։ Գեներալ-ադիւտանտ իշխան Բարիատինսկի նշանակվում է Նորին Մեծութիւն Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէօդորօվնայի մօտ։

«Новое Время» հաղորդում է, որ յուլիսի վերջերին Օդէսա է գնալու Ժողովրդական լուսաւորութեան մինիստրի օգնական Անիչկով, որի ներկայութեամբ տեղի կունենայ Օդէսայի համալսարանի բժշկական ֆակուլտէտի հիմնարկութիւնը։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ, 9 յուլիսի։ Յուլիսի 8-ին ցուցահանդիսում կային կրկին 15 հազարից աւելի այցելուներ։

Էկսպոնէնտները բազմաթիւ հետաքրքիր առարկաներ են պատրաստել ցուցահանդէսի Օդոստափառ Այցելուներին մատուցանելու համար։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, սիֆիլիս և վենէրական հիւանդութիւնների։

Դ. Գ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

ԿԷՆ-բժիշկ ԴՈՒՆԱՅԵՎԱ-ԲՈՒԴԵՆԿՕ—10—11 ժ. կանանց և երեխ. հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—$1\frac{1}{2}$ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ. երեք. հինգշ. և շաբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երկուշաբթի չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—6—7 ժ. Սիֆիլիսի, մկզի և սեռական օրգանների հ. ներքին և մարթի հ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մկզի, խիի, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՊԻՍ. ՍԵՊՐԱԿԵԱՆ

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ԳԻՆԸ 1 ՐՈՒԲԼԻ

Վաճառվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, կենտրօնական գրավաճառանոցում և Ց. Տէր-Սարգսեանի խանութում, Դվորցօվայա փողոց։ (№ 78) 2—10

ՄԱՆԿԱՎԱՐԺ-ՈՒՍՈՒՑԻՉ

Հայոց լեզուի և մարմնամարզութեան, նաև առարկաների (փոքրերի համար), թէ իբր երթևեկ և թէ իբր մնայուն ԴԱՍԱՏԻԱՐԱԿ։ Դիմել բժշկապետ Բ. Նաւասարդեանին, ժամը 11—12, հիւանդանոց։ (№ 78) 2—6

ԲԺՇԿԱԳԵՏ ԲԵՐԲԵՐԵԱՆԸ

Նախկին տարիների պէս այս ամառվայ ընթացքում ևս ընդունում է ԷՍՍԵՆՏՈՒԿՈՒՄ ներքին և մկզի հիւանդութիւն ունեցողներին։ (№ 60) 7—10

ԱՍՏՐԱԽԱՆԻ հայոց դպրոցների համար հարկաւոր են ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ԵՐԿՈՒ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ։ Պայմանների մասին տեղեկանալ „Մշակի“ խմբագրատանը, ցերեկվայ 1—2 ժամը։ (№ 78) 2—3

ԿԷՕԼԷՐԵԱՆ ՍԵՂԱՆԻ ՀՈՏԱՒԷՏ ՄԱՆԱՆԵԼԻ

Փոչու ձեւով, կատարելապէս պատրաստ՝ վայրկենաբար նրանից մանանեխ պատրաստելու համար, գերազանցում է բոլոր դրա նման փոչիներից իր նուրբ համով, հոտաւէտութեամբ և էժանութեամբ։

Ծախվում է ԱՄԵՆ ՏԵՂ, ԲՈԼՈՐ նշանաւոր առևտրականների մօտ։ № 89 (7) 1—3

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ Զեռնարկի առևտրական և գործարանական հաշուապահութեան
ՌՈՒՍԻՑԱՆՈՒՄ Է ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու սեռի անձանց, 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, եբաշխատելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել։

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

Ա.) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերոսինի գործարանական հաշուետեսութեան։

Բ.) Առևտրական թուաբանութիւն.

Գ.) Առևտրական նամակագրութիւն.

Դ.) Դեղագրութիւն և ամենավաղ ձեռքերի ուղղութիւն։

Պարապմունքները սկսվելու են սեպտեմբերի 10-ից ճաշից յետոյ և պարբերաբար չարունակվելու են իրաքանչիւր ՁՈՐՍ ամսից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործնական պարապմունքներ։

Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 4 ժամից մինչև 6 ժամ երեկոյեան, ՍՕԼՕԼԱԿ Ֆրէյլինեան փողոց, տուն Սուլթանովի, № 13։

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, խիդղէկելի գրավաճառանոցում և հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում։ ԳԻՆՆ Է 3 ր. 50 կոպէկ։

Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստայի ծախս վճարելու։

(հ.) (№ 74) 3—15

ԿԷՕԼԷՐԵԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՎԱԾ

ԿՕԼԴ-ԿՐԵՄ ԵՒ ՇՐԹՈՒՆՔԱՅԻՆ ԱՆՈՒՇԱՀՈՏ ԻՒՂ

ցոյց են տալիս իրանց նշանաւոր առաւելութիւնները նրանց գործածութեան բոլոր դէպքերում։ Ծախվում են ԱՄԵՆ ՏԵՂ, ԲՈԼՈՐ նշանաւոր առևտրականների մօտ։ № 79 (8) 1—3

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Թիֆլիս, Նագօրնայա փողոց, № 9)

Ցանկացողք, ունենալ իրանց առևտրական գործերի համար ուսման ընթացքը աւարտած աշակերտներ և աշակերտուհիներ, թող բարեհաճեն դիմել կուրսերի հիմնողին, Ս. Մանուէլեանցին։ Աւարտողները ստացել են մասնագիտական առևտրական կրթութիւն, Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի հաստատված ծրագրի համեմատ, և ունեն օրինաւոր ատեստատներ։

Ընդունելութիւնները սկսվելու են սեպտեմբերի 2-ից։

Կուրսերի ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս եղբ. Յովհաննովների բանկային գրասենեակում և կուրսերի հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, учредителю коммерческихъ курсовъ С. П. Мануэльянцу.

(№ 76) (հ.) 2—7

ՌԻՏՍ-ՌԻՍ

Քիմիա-կօսմետիկական լաբորատորիա ՌԻՍ-ԳՈՒՏՄԱՆ

СЪ ДОЗВОЛЕНІЯ МЕДИЦИНСКАГО ДЕПАРТАМЕНТА ПРИВИЛЕГИРОВ. ЛИЧНАЯ ПОМАДА. PASTA EUGENIE. ПОМАДЫ.

Berthae Ries

ԿՕՍՄԷՏԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

„ՌԻՏՍ-ՌԻՍ“ „ամի դրոշմով“

ԷՕԺԷՆԻԱՅԻ ՊԱՍՏԱ

երեսի մորթը կակղեցնելու համար պօմադ. ոչնչացնում է չուտով երեսի վրա եղած կարմիր բիծերը և մունները. այս միջոցը առաջ է բերում նաև երեսի թարմութիւն և գեղեցկութիւն։ Գինը 1 ր. 60 կ.

Elixir Mélange

Մազերը աճեցնելու և գլխի թեփը ոչնչացնելու հեղուկ։ Գինը 2 ր.

ԷՕԺԷՆԻ ՊՈՒԴՐԱ

սպիտակ, վարդագոյն և Բաչել (թուխ դէմք ունեցողների համար) նա ամուր կերպով պահպանվում է մորթու վրա և բոլորովին անտեսանելի է աչքի համար, մորթուն տալիս է նոյնպէս խիստ կակղութիւն, առաձգութիւն և քնքշութիւն։ Գինը և 1 ր. 20 կ. 1 ր. 50 կ.

ԷՕԺԷՆԻ ԿԱՐՄԻՐ ՆԵՐԿ

հեղուկ վիճակի մէջ այտերին և ականջներին տալիս է բոլորովին բնական, վարդագոյն գոյն որ ոչ ցերեկվայ, ոչ ելէքտրական լոյսից չէ փչանում։ Գինը 1 ր. 50 կ.

ՄԻՐՏԱՅԻՆ ԲԱԼԶԱՄ

(պուդրա հեղուկ վիճակի մէջ), տալիս է երեսին, վզին, ձեռքերին քնքոյշ կակղութիւն և մարմարեանման մաքրութիւն։ Նա ոչնչացնում է արեհարքը, մունները և մորթու վրա եղած ամեն մի անհարթութիւն և տգեղութիւն։ Գինը 1 ր. 75 կ.

ԳԻՆԱ-ԳԼԻՑԵՐԻՆԱՅԻՆ

գլխի պօմադ Պէրուանական բալզամով եփած՝ մազերը սնդացնելու, խատացնելու և աճեցնելու համար։ Գինը 2 ր.

ԽԽՈՒՆՋԱՅԻՆ ՊՕՄԱԴ

նրա գործածութիւնից յետոյ ձեռները ստանում են զարմանալի սպիտակութիւն և ճկունութիւն։ Գինը 1 ր. 30 կ.

ՈՒՆԳԱՐԱԿԱՆ ԷՍՍԷՆՅԻԱ

բեղերի համար (Ռիս-Գուտման) տալիս է նրանց անմիջապէս հարկաւոր ձեւը, ամրացնում է նրանց և նպաստում է նրանց արագ աճման։ Գինը 75 կ.

ՆԵՐԿԵՐ ՄԱԶԵՐԻ ՀԱՄԱՐ

(Ռիս-Գուտման), սև, չագանակագոյն և խարտեաշ։ Այդ ներկով ներկված մազերը պահպանում են իրանց գոյնը 6 չաթվայ ընթացքում։ Գինը 3 ր.

Ծախվում է բոլոր դեղարարական և կօսմէտիական խանութներում։ Գլխաւոր պահեստը՝ Բարձրագոյն հաստատված՝ դեղարարական ապրանքների կովկասեան ընկերութեան մէջ Թիֆլիս և Բագու։ (№ 26) 15—50

Дозволено цензурою, Тифлисъ, 10 Іюля 1896 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. 127.